## *1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ ու ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ*

***Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:*** Բնակչության դրամական եկամուտները 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 455326,8 մլն.դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 8.5 տոկոսով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 448959,0 մլն.դրամ և ավելացել 6.1 տոկոսով:

**Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի դինամիկան**

| | Բնակչության դրամական եկամուտները | | Բնակչության դրամական ծախսերը | | Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ, մլն.դրամ |
|---|---|---|---|---|---|
| | մլն.դրամ | տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ* | մլն.դրամ | տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ * | |
| <u>2000թիվ</u> | | | | | |
| Հունվար | 48068.6 | 123.6 | 46533.3 | 104.5 | +1535.3 |
| Հունվար-փետրվար | 79281.1 | 107.1 | 86139.0 | 109.1 | -6857.9 |
| Հունվար-մարտ | 125601.9 | 108.4 | 130787.9 | 107.8 | -5186.0 |
| ***I եռամսյակ*** | ***125601.9*** | ***108.4*** | ***130787.9*** | ***107.8*** | ***-5186.0*** |
| Հունվար-ապրիլ | 165516.9 | 104.8 | 172423.3 | 106.5 | -6906.4 |
| Հունվար-մայիս | 212487.8 | 104.3 | 217881.2 | 104.7 | -5393.4 |
| Հունվար-հունիս | 263891.9 | 104.2 | 267998.8 | 104.2 | -4106.9 |
| ***II եռամսյակ*** | ***138290.0*** | ***100.7*** | ***137210.9*** | ***101.0*** | ***+1079.1*** |
| Հունվար-հուլիս | 325393.3 | 105.5 | 323872.0 | 103.9 | +1521.3 |
| Հունվար-օգոստոս | 387762.6 | 108.5 | 384164.5 | 106.0 | +3598.1 |
| Հունվար-սեպտեմբեր | 455326.8 | 108.5 | 448959.0 | 106.1 | +6367.8 |
| ***III եռամսյակ*** | ***191434.9*** | ***115.0*** | ***180960.2*** | ***109.0*** | ***+10474.7*** |
| | | | | | |
| <u>1999թիվ</u> | | | | | |
| Հունվար | 37927.7 | 102.5 | 43559.7 | 112.1 | -5632.0 |
| Հունվար-փետրվար | 74249.1 | 99.8 | 79188.4 | 102.1 | -4939.3 |
| Հունվար-մարտ | 117376.2 | 100.2 | 122804.9 | 104.5 | -5428.7 |
| ***I եռամսյակ*** | ***117376.2*** | ***100.2*** | ***122804.9*** | ***104.5*** | ***-5428.7*** |
| Հունվար-ապրիլ | 157963.6 | 104.7 | 163282.4 | 106.5 | -3905.7 |
| Հունվար-մայիս | 203256.2 | 109.3 | 207616.8 | 110.0 | -4360.6 |
| Հունվար-հունիս | 250669.8 | 111.0 | 254578.5 | 111.4 | -3908.7 |
| ***II եռամսյակ*** | ***133293.6*** | ***122.7*** | ***131773.6*** | ***118.9*** | ***+1520.0*** |
| Հունվար-հուլիս | 302842.7 | 114.8 | 306188.7 | 115.9 | -3346.0 |
| Հունվար-օգոստոս | 350701.7 | 112.3 | 355786.5 | 114.3 | -5084.8 |
| Հունվար-սեպտեմբեր | 411058.7 | 114.9 | 414626.4 | 116.5 | -3567.7 |
| ***III եռամսյակ*** | ***160388.9*** | ***121.5*** | ***160047.9*** | ***125.4*** | ***+341.0*** |

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2000թ. հունվար-սեպտեմբերին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 373113.9 մլն.դրամ (81.9 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար` 19844.2 մլն.դրամ (4.4 տոկոս), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 23154.0 մլն.դրամ (5.1 տոկոս):

--------------------------

*) *տեմպերը հաշվարկված են " ՀՀ մանրածախ առևտրի կազմակերպությունների (խանութների) և կրպակների " ընտրանքային հետազոտության արդյունքներով 1999թ. մանրածախ առևտրի (որպես բազային) ցուցանիշի ճշգրտման հիման վրա:*

**Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը**

| | Դրամական եկամուտներ | դրանցից օգտագործվել է | | | | Կանխիկ դրամի աճ(+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին |
|---|---|---|---|---|---|---|
| | | ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար | պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար | խնայողությունների կուտակման համար՝ ավանդներում և արժեթղթերում | այլ ծախսեր | |
| 2000թ. | | | | | | |
| հունվար | 100.0 | 79.7 | 3.0 | +6.3 | 7.8 | +3.2 |
| փետրվար | 100.0 | 103.6 | 7.2 | +5.9 | 10.2 | -26.9 |
| մարտ | 100.0 | 81.8 | 5.2 | +4.1 | 5.3 | +3.6 |
| *I եռամսյակ* | *100.0* | *86.4* | *4.9* | *+5.4* | *7.5* | *-4.2* |
| ապրիլ | 100.0 | 87.9 | 5.0 | +0.4 | 11.0 | -4.3 |
| մայիս | 100.0 | 83.0 | 4.4 | +1.8 | 7.6 | +3.2 |
| հունիս | 100.0 | 82.4 | 4.7 | +5.0 | 5.4 | +2.5 |
| *II եռամսյակ* | *100.0* | *84.2* | *4.7* | *+2.6* | *7.7* | *+0.8* |
| հուլիս | 100.0 | 77.9 | 3.8 | +1.8 | 7.3 | +9.2 |
| օգոստոս | 100.0 | 79.9 | 4.0 | +6.3 | 6.5 | +3.3 |
| սեպտեմբեր | 100.0 | 74.6 | 3.6 | +11.5 | 6.2 | +4.1 |
| *III եռամսյակ* | *100.0* | *77.4* | *3.8* | *+6.7* | *6.6* | *+5.5* |
| 1999թ. | | | | | | |
| հունվար | 100.0 | 88.7 | 4.0 | +13.2 | 9.0 | -14.9 |
| փետրվար | 100.0 | 83.5 | 5.8 | +0.3 | 8.5 | +1.9 |
| մարտ | 100.0 | 89.4 | 4.9 | +1.6 | 5.2 | -1.1 |
| *I եռամսյակ* | *100.0* | *87.3* | *4.9* | *+4.9* | *7.5* | *-4.6* |
| ապրիլ | 100.0 | 79.7 | 4.6 | +2.4 | 9.7 | 3.6 |
| մայիս | 100.0 | 83.7 | 4.5 | +5.6 | 7.2 | -1.0 |
| հունիս | 100.0 | 83.5 | 6.3 | +3.0 | 6.3 | +0.9 |
| *II եռամսյակ* | *100.0* | *82.4* | *5.1* | *+3.7* | *7.7* | *+1.1* |
| հուլիս | 100.0 | 81.7 | 5.7 | +3.0 | 8.6 | +1.0 |
| օգոստոս | 100.0 | 95.1 | 4.8 | -4.3 | 8.0 | -3.6 |
| սեպտեմբեր | 100.0 | 77.1 | 5.3 | +8.8 | 6.3 | +2.4 |
| *III եռամսյակ* | *100.0* | *83.9* | *5.3* | *+3.0* | *7.5* | *+0.2* |

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռը նվազել է 2.4 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռն ավելացել է 1.3 տոկոսային կետով:

*Բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը*




***Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները***: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների

փոփոխությունները) 2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ աճել են 10.3 տոկոսով :

**Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտների դինամիկան**
(տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)




*Աշխատանքի վարձատրություն:* 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9 հազար սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 20362 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 13.8 տոկոսով: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա կազմել է 13560 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 14.0 տոկոսով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար 25704 դրամ և 16.8 տոկոսով:

**Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը 2000թ. օգոստոսին՝ նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի**

| | Անվանական միջին աշխատավարձը, դրամ | | Տոկոսներով ընդամենի նկատմամբ | | Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|
| | օգոստոս | հունվար-օգոստոս | օգոստոս | հունվար-օգոստոս | օգոստոս | հունվար-օգոստոս |
| **Ընդամենը** | **21204** | **20160** | **100** | **100** | **112.9** | **113.9** |
| Արդյունաբերություն | 31100 | 28657 | 146.7 | 142.1 | 129.3 | 126.4 |
| Գյուղատնտեսություն | 14564 | 15714 | 68.7 | 77.9 | 114.1 | 120.6 |
| Անտառտնտեսություն | 10135 | 10154 | 47.8 | 50.4 | 109.7 | 117.0 |
| Տրանսպորտ | 31638 | 32957 | 149.2 | 163.5 | 96.8 | 105.2 |
| Կապ | 41378 | 41643 | 195.1 | 206.6 | 111.7 | 112.1 |
| Շինարարություն | 36707 | 33845 | 173.1 | 167.9 | 99.3 | 91.3 |
| Առևտուր, հանրային սնունդ | 7088 | 7315 | 33.4 | 36.3 | 61.6 | 64.6 |
| Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղ-սպասարկում | 23038 | 22764 | 108.6 | 112.9 | 113.3 | 127.0 |
| Հաշվողական տեղեկատվական սպասարկում | 18303 | 17883 | 86.3 | 88.7 | 121.5 | 106.0 |

| | Անվանական միջին աշխատավարձը, դրամ | | Տոկոսներով ընդամենի նկատմամբ | | Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|
| | օգոստոս | հունվար-օգոստոս | օգոստոս | հունվար-օգոստոս | օգոստոս | հունվար-օգոստոս |
| Առողջապահություն, ֆիզ-կուլտուրա և սոցիալական ապահովություն | 12671 | 12452 | 59.8 | 61.8 | 106.0 | 115.4 |
| Կրթություն | 12528 | 11543 | 59.1 | 57.3 | 121.5 | 120.4 |
| Մշակույթ | 10055 | 9728 | 47.4 | 48.3 | 100.5 | 108.3 |
| Արվեստ | 10126 | 10373 | 47.8 | 51.5 | 97.6 | 107.9 |
| Գիտություն և գիտական սպասարկում | 16467 | 15775 | 77.7 | 78.2 | 102.1 | 102.8 |
| Վարկավորում և պետապ | 72128 | 66412 | 340.2 | 329.4 | 134.1 | 123.5 |
| Կառավարման ապարատ | 32970 | 30956 | 155.5 | 153.6 | 114.8 | 114.6 |
| Այլ | 26737 | 23615 | 126.1 | 117.1 | 127.6 | 131.5 |

2000թ. օգոստոսին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 47.4 (մշակույթ), 59.8 (առողջապահություն և սոցիալական ապահովություն) տոկոսի սահմաններում: Անվանական միջին աշխատավարձն զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում` ընդհանուր միջինը գերազանցել է 3.4 անգամ, կապի համակարգում` 2.0, շինարարության մեջ` 1.7, կառավարման համակարգում` 1.6, արդյունաբերության մեջ և տրանսպորտում` 1.5, այլ ճյուղերում` 1.3, բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում` 1.1 անգամ:

Պետք է նշել, որ աշխատանքի վիճակագրության մեջ կիսամյակային պարբերականությամբ հաշվառում է տարվում ամիսն ամբողջությամբ աշխատած աշխատողների թվաքանակի վերաբերյալ` ըստ աշխատավարձի չափի.

**Ամիսն ամբողջությամբ աշխատած աշխատողների թվաքանակի բաշխումն` ըստ աշխատավարձի չափի, հունիս**

| | 2000թ. | 1999թ. |
|---|---|---|
| Ամիսն ամբողջությամբ աշխատած աշխատողների թվաքանակը,մարդ | 100 | 100 |
| այդ թվում` | | |
| սահմանված նվազագույնից ցածր (մինչև 5000) | 6.2 | 6.9 |
| 5001-9000 | 23.2 | 23.2 |
| 9001-20000 | 32.8 | 41.4 |
| 20001-30000 | 22.5 | 11.3 |
| 30001-40000 | 5.1 | 4.5 |
| 40000-ից ավելի | 10.2 | 12.7 |

Աշխատավարձի չափերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ աշխատողների 6.2 տոկոսն է ստանում մինչև 5000 դրամ անվանական աշխատավարձ, միաժամանակ 10.2 տոկոսի աշխատավարձը գերազանցում է 40000 դրամից: ''Ամենատարածված աշխատավարձի խումբը'' 9001-20000 դրամն է, որի սահմաններում վճարվում են աշխատողների 32.8 տոկոսը: Այսպիսով, զբաղված աշխատուժի կեսից ավելիի (62.2%) ամսական աշխատավարձը 2000թ. հունիսի դրությամբ կազմել է 9-37 դոլար: